երկրորդ կենդանախումբը։ Այստեղ կենդանիների միջև տեղադրված են խաչեր, իսկ ձախակողմյան կենդանու բաց երախի առջև՝ թռչունների շարք։ Երրորդ և չորրորդ կենդանապատկերները մյուսների նման իրարից բաժանվում են զիգզագաձև գծերի խմբերով։ Վերջին կենդանախումբը խիստ բայքայված է, բայց ինչպես երևում է պահպանված բեկորներից, հիշեցնում է աջից երկրորդ պատկերը։

Շիրակավանից հայտնաբերված մյուս գոտին թերի է (նկ. 1)։ Այն ներկայացնում է 20 սմ երկարությամբ, 18 սմ լայնությամբ և 1 մմ հաստությամբ բրոնզե թիթեղ, որի մակերեսը նախորդի նման զարդարված է երևակայական կենդանիների ու երկրաչափական մարմինների պատկերներով։ Ինչպես վերը նկարագրած գոտու վրա, այնպես էլ այստեղ առկա են գալարապարույրների երեք շարքից բաղկացած շերտեր, որոնցից մեկն անցնում է կենտրոնով, իսկ մյուսները՝ եզրերով։ Կենտրոնական զարդաժապավենով երկու հավասար մասերի բաժանված մակերեսին պատկերված են երևակայական կենդանիների գլուխների երկու շարքեր։

Վերինում ներկայացված կենդանիներն ունեն բաց երախներ, սուր լեղուներ։ Գլուխները ծածկված են մանր կետերով, իսկ աչքերն արտահայտված են ոչ մեծ շրջանակներով։ Այստեղ ներկայացված կենդանիները իրենց տեսքով և արտահայտման ոճով նման են նախորդ գոտու կենդանիներին, այն տարբերությամբ, որ սրանք մեծ ականջներ չունեն։ Կենդանիներից վերև, զարդաժապավեններից մեկում արված են այիրաձև պատկերներ, որոնք կարող են արտահայտել ջուրը կամ խորհրդանշել կենդանու միջավայրը։ Նկատենք, որ այս պատկերների մակերեսներն էլ կենդանիների նման ծածկված են մանր կետերով։ Ստորին շարքի կենդանիների գլուխները իրենց տեսքով նման են վերևում ներկայացվածներին։ Սրանք ունեն ցած հակված ծայրերով ականջներ կամ եղջյուրներ հիշեցնող փոքրիկ ելուստներ։ Կենդանագոտուց ցած պատկերված է այիքներ խորհրդանշող զարդագոտի։

Երկու գոտիների վրա էլ կենդանիների և երկրաչափական զարդերի հորինման հնարանքները նույնն են, տարբերությունը նրանց ձևի, ոճի և այուժեի արտահայտման մեջ է։ Երկրորդ գոտու վրա եղած երևակայական կենդանիները իրենց շրջապատող միջավայրում կապվում են ջրի պաշտամունքի հետ և դրսևորում են նախնադարյան բնապաշտների առասպելականացված պատկերացումները երկնային և երկրային ջրերի, «ծիրանի ծովերի» ու նրանցում բնակվող կենդանիների՝ վիշապների մասին։

Գոտիների բեկորների վրա պատկերված կենդանիները իրենց նմանակներն ունեն Հայաստանի վաղ երկաթի դարաշրջանի կիրառական արվեստի այլ նմուշներում[36]։ Գալարապարույրներով երիզված միստիկ այուժեներով բրոնզե գոտիներ են հայտնաբերված նաև Հայաստանի այլ հնավայրերից։ Գալարապարույրները ճանաչված են որպես ժամանակը, անվերջությունը և հավերժությունը խորհրդանշող պատկերներ[37]։

Այսպիսով, ներկայացված գոտիների վրա մեծ հմտությամբ պատկերվել է երկու և երեքական կենդանիներից ու երկրաչափական մարմիններից բաղկացած որոշակի այուժե, որն անկասկած արտահայտում է բնիկների կրոնապաշտամունքային պատկերացումները՝ վերարտադրված նախնադարյան կիրառական արվեստի միջոցով։

Պատմ. գիտ. թեկնածու Ռ. Մ. ԹՈՐՈՍՅԱՆ,
Պատմ. գիտ. թեկնածու Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ
Լ. Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

---

36 А. Мнацаканян, Археологические находки в селении Басаргечар, էջ 43։

37 Բ. Թումանյան, Հ. Մնացականյան, Բրոնզե դարի գոտի-օրացույց, Երևան, 1965։

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ ԴՎԻՆՈՒՄ

1978 թ. Դվինի կենտրոնական թաղամասում անտիկ դարաշրջանի շերտագրական պատկերը պարզելու և ուսումնասիրելու նպատակով պեղվեց միանավ բազիլիկ եկեղեցուց հարավ և դրան զուգահեռ՝ 5×10 մ մակերեսով մի հատված։ Այստեղ բացվեց մոտավորապես 50 սմ միջին հզորության շերտ, հելլենիստական խեցեղենով հարուստ, որի տակ նկատելի էին մ. թ. ա. IX—VIII դդ. քարե ճարտարապետական շինվածքի հետքեր՝ համապատասխան նյութերով։ Հելլենիստական ժամանակաշրջանի շերտում հայտնաբերվեց կարասային թաղում։ Կարասը գտնվում էր հորիզոնական դիրքում՝ մեծ ու խոր տաշտով ծածկված բերանը դեպի արևելք։ Ջկային միայն նստուկի և իրանի որոշ բեկորներ, որոնք ջարդոտված վիճակում ընկած էին հենց կարասի մեջ։ Չնայած նստուկի պակասող մասերը չգտնվեցին, սակայն ելնելով անոթի ընդհանուր ձևից և համեմատելով նմանատիպ կարասների հետ, ենթադրվում է, որ դրա դուրս ցցված զանգվածեղ շուրթը և հաստապատ, ուռուցիկ իրանը հենվել են տափակ

նստուկի մրա։ Կարասի պահպանված բարձրությունը 120 սմ է. բերանի տրամագիծը՝ 42, իսկ ամենալայն մասինը՝ 94 սմ։ Կմախքը պառկած էր աջ կողքին, կծկված վիճակում, գլուխը դեպի կարասի բերանը. դեմքը՝ հյուսիս։ Դեմքի և ձեռքերի մոտ գտնվեցին գնդաձև իրանով տափաշիշ և ներս հակված ուղիղ շրթով թասիկ։

Տաշտը, որով ծածկել են կարասը, լայնաբերան, խոր անոթ է, որի բավական փոքր հատակից կողերը աստիճանաբար լայնանալով՝ շրթի տակ կազմում են ներճկված ակոսագոտի և փոխարկվում կլորավուն շրթի (աղ. I, 2)։ Տաշտի չափերն են. բերանի տրամագիծը՝ 44, հատակինը՝ 15,5, բարձրությունը՝ 19, ներճկված ակոսի լայնքը՝ 1 սմ։ Տաշտը դեղնավուն է (բաց նարնջագույն երանգով), վերին մասում արտաքին մակերևսի վրա նկատելի են փայլեցման հետքեր։ Ամանը վերանորոգվել է. այդ է ցույց տալիս զույգ առ զույգ. համապատասխանորեն միմյանց հարմարեցված ութ անցքերի առկայությունը իրանի և շրթի շրջանում։ Նման տաշտերը լայն կիրառություն են գտել տնտեսության մեջ՝ օգտագործվելով կաթի և խմորի համար։ Այս ամանները դրավում են ժամանակագրական լայն շրջանակներ։ Սրանց բազմաթիվ նախատիպերի հանդիպում ենք ուրարտական խեցեղենում[1]։ Ուշագրավ է, որ Դվինի միջնադարյան խեցեղենը ևս տալիս է նման կաթնամանների բազմազան տարբերակներ[2]։ Սակայն քննվող տաշտն իր ձևով և մշակումով աղերսվում է Հայաստանի հելլենիստական դարաշրջանի նմանօրինակ ամաններին՝ գտնված Արմավիրում և Արտաշատում[3]։ Թեպետ քննվող դարաշրջանի հյուսիսմերձսևծովյան բնակավայրերի նմանատիպ ամաններն ունեն շրթի և ակոսագոտու ամենատարբեր ձևավորումներ, այդուհանդերձ Դվինի տաշտն իր ընդհանուր տեսքով աղերսվում է նաև դրանց[4]։

Ժամանակաշրջանին բնորոշ իր առանձնահատկություններով աչքի է ընկնում տափաշիշը (աղ. I, 1)։ Բավական խնամքով շինված վիզն իր բոլորակ պսակով հենված է գնդաձև իրանի վրա, որն օժտված է կանթերով։ Տափաշշի չափերն են. բարձրությունը՝ 26 սմ, բերանի բաց-



Աղ. I

վածքի տրամագիծը՝ 5 սմ, իրանի ամենաուռուցիկ մասի շրջագիծը՝ 67 սմ, կանթի երկարությունը՝ 8 սմ։ Տափաշշի կարմրով ներկած մակերևսի վրա նկատելի են վրձնի հարվածի և թեթևակի փայլեցման հետքեր։ Տափաշշերը առաջատար տեղ են գրավում Դվինի և ընդհանրապես Հայաստանի հելլենիստական հուշարձանների խեցանոթների հավաքածուների շարքում[5]։ Սակայն հետազոտությունները ցույց են

[1] А. А. Мартиросян, Аргиштихинили. Ереван, 1974, էջ 144, նկ. 53—54։

[2] Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, աղ. XXVI₀, աղ. XXXVI₂։

[3] Գ. Ա. Տիրացյան, Հնագիտական աշխատանքները Արմավիրում (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1973, № 5, նկ. 3—4)։ Մ. Հ. Զարդարյան, Հելլենիստական ավանդույթները և Հայաստանի տեղական խեցեղենի արտադրությունը (Հայկական ՍՍՀ-ում 1975—1976 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ, Երևան, 1977, էջ 27—28)։

[4] И. Т. Кругликова, Ремесленное производство простой керамики в Пантикапее в VI—III вв. до н. э. («Материалы и исследования по археологии СССР», № 56, М., 1957, էջ 130—131)։ И. Б. Зеест, Пантикапейская керамика сарматского времени (նույն տեղում, էջ 151, նկ. 5)։

[5] Դ. Քոչարյան, Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը. ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 5, էջ 83—84։

տալիս, որ միայն մ. թ. ա. I դարի կեսից և հատկապես վերջից Հայաստանում հայտնաբերված տափաշշերը հելլենիստական ժամանակաշրջանին բնորոշ երկու կամ մեկ կողմից սեղմված սկավառակատիպ ուռուցիկ իրանի ձևը կորցնում են, դառնալով գնդաձև։ Բացի այդ, Դվինի տափաշիշը, իր արտաքին մշակմամբ, կարմիր ներկով, թեթևակի, անփույթ փայլեցման հետքերով, ոչ հարթ մակերևսով և, վերջապես, նախշազարդման բացակայությամբ հարում է հիմնականում մ. թ. ա. I դարի խեցեղենին։ Հիշյալ հանգամանքները նկատի առնելով Դվինի գնդաձև տափաշիշը թվագրվում է ոչ վաղ, քան մ. թ. ա. I դարով, ավելի ճիշտ՝ մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով։

Կարասի միջից տափաշշի հետ գտնվել է նաև մի թասիկ (աղ. I, 3)։ Վերջինիս փոքրիկ, հարթ հատակից կողերը աստիճանաբար կորանալով՝ կալ։ում են թեթևակի ներս հակված նոր։ բ շուրթ։ Թասի չափերն են. բերանի տրամագիծը՝ 13,5 սմ, հատակինը՝ 5 սմ, բարձրությունը՝ 5 սմ։ Թասը կարմրավուն է, բայց նկատելի են մուգ շագանակագույն վրձնահետքեր, որոնք ժամանակին արվել են հավանաբար գունային տպավորություն ստեղծելու համար։ Սակայն երկար դործածվելուց ամանը խունացել է և կորցրել իր նախկին երանգը։ Թասի հելլենիստական ժամանակաշրջանին պատկանելը կասկած չի հարուցում, քանի որ թե՛ ձևով և թե՛ հարդարումով նման անոթներ հայտնաբերվել և հայտնաբերվում են Հայաստանի համարյա բոլոր հելլենիստական հուշարձանների պեղումներից։

Այսպիսով պարզ է դառնում, որ 1978 թ. պեղված կարասային թաղումը պատկանում է հելլենիստական դարաշրջանին, իսկ գնդաձև տափաշշի առկայությունը թույլ է տալիս ամբողջ համալիրը թվագրել ավելի ստույգ՝ մ. թ. ա. I դարի երկրորդ կեսով։ Վերը նկարագրված կարասային թաղումը միակը չէ, քանի որ 1938 թ. ի վեր այս նույն՝ կենտրոնական թաղամասում հայտնաբերվում են կարասային թաղումներ։

Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող Դվինի արշավախմբի դաշտային օրագրերում և մատյաններում եղած տվյալները, նեգատիվ, ինչպես նաև հրատարակված նյութերը հնարավորություն են ընձեռում գոնե նախնական ուրվագծով ներկայացնել Դվինի դամբարանադաշտի ընդհանուր պատկերը[7]։ Դամբարանադաշտը՝ բաղկացած կարասային թաղումներից, փռված է եղել Դվինի կենտրոնական թաղամասում (միջնաբերդից արևմուտք)՝ գլխավորապես կաթողիկե, ինչպես

Աղ. II

նաև միանավ բազիլիկ եկեղեցիների և կաթողիկոսական պալատի շրջակայքում։ Այժմ քննենք այդ կարասային թաղումներն իրենց համալիրներով, ըստ հայտնաբերման տարիների։

Կարասային թաղում № 1. հայտնաբերվել է 1938 թ. կաթողիկոսական պալատի հարավային կողմի փոքր սենյակներից մեկում, 1,4 մ խորությունից։ Կարասում, բացի կմախքի մնացորդներից, գտնվել են նաև բրոնզե մանկական փոքրիկ ապարանջան, ականջող, շքասեղի գլխիկի մի բեկոր և տարատեսակ ուլունքներ (աղ. II, 3)։ Բրոնզե այսօրինակ պարզագույն զարդերը (մանկական օղակաձև ապարանջան,

---

6 Ф. И. Тер-Мартиросов, Фляги как торговая тара. Проблемы античной истории и культуры (доклады XIV международной конференции античников социалистических стран «Эйрене»), Ереван, 1979, т. II, էջ 409—414։

7 Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան. 1952, էջ 59. 82։ Դաշտային օրագրեր. Կ. Ղաֆադարյան՝ 1938, 1948, 1949. 1950 թթ.։ Գ. Քոչոյան՝ 1947, 1949, 1950. 1951 թթ., Մ. Վահանյան՝ 1947, 1948 թթ.։ Շնորհիվ այս արժեքավոր աղբյուրների ստորև ներկայացվում է Դվինի հելլենիստական դարաշրջանի դամբարանադաշտի պատկերը։

ականջօղ սուր ականջակալով), որոնք բնորոշ են համարյա բոլոր դարաշրջաններին, չեն կարող օգնել տվյալ կարասային թաղման թվագրմանը։ Այդ տեսակետից ավելի ուշագրավ են ուլունքները։ Դրանցից մեկը տակառաձև՝ երկկոնիկ ուրվագծով. ուլունք է, պատրաստված բարձրորակ գագատից (գիշերից), ունի լավ պահպանված հայելանման մակերես։ Սա նյութով և ձևով հարում է հյուսիսմերձսևծովյան գիշերե ուլունքների համալիրներին, որոնք թվագրվում են մ. թ. ա. II, ինչպես նաև մ. թ. I—III դդ.[8]։

Ապակե շաղախից պատրաստված երկար խողովակը կտրատելով և հետո սառը հղկման ենթարկելով ստացել են պարզ գլանաձև, տարբեր երկարության ուլունքներ։ Իսկ, օրինակ, միակ բլթիկավոր ուլունքը պատրաստվել է հատուկ կաղապարում՝ անընդհատ շղթայով և հետո միայն առանձնացվել իրարից։ Սա հիշեցնում է Կառնիի կարասային թաղումից հայտնաբերված նման ուլունքը, որն ի դեպ նույն կարասում հայտնաբերված ձվածիր ապակե կնիքի շնորհիվ թվագրվում է մ. թ. ա. I դարով։ Բազմագույն ապակուց են պատրաստվել ակնուլունքները, յուրաքանչյուրը ընդելուզված երեքական բարդ բաղկացուցիչ աչքերով։ Նման ակնուլունքների հանդիպում ենք Գառնիի, հատկապես հելլենիստական դարաշրջանի թաղումներում[10]։ Ուշագրավ է բրոնզե բաժանարարերկգլանանի ուլունքը, որը ձևով աղերսվում է Ներոն Դերեսի (Վրաստան) մ. թ. ա. I դարի դամբարանադաշտից գտնված նման ձևի բաժանարարին[11]։

Կարասային թաղում № 2. Սրա մնացորդները հայտնաբերվել են 1946 թ. կաթողիկոսական պալատի և կաթողիկե եկեղեցու արևմտյան կողմում՝ հորի մեջ. 1 մ խորությունից։

Կարասային թաղում № 3. 1947 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի շրջակայքից հայտնաբերվել է փոքր չափերի կարաս՝ մանկան կմախքի մնացորդներով, բրոնզե, պարզ օղակաձև մանկական ապարանջան և մատանի, հաստ ապարանջանի մի բեկոր, որ, ըստ երևույթին, եղել է ոտքի ապարանջանի կտոր (ընդ որում նման ոտքի հաստ ապարանջանների հաճախ ենք հանդիպում Մինգեչաուրի կարասային թաղումներում)[12] և հինգ ուլունք, որոնցից պահպանվել են միայն երկուսը. մեկը՝ հասպիսից, գնդաձև, երկու կողմից սեղմված, ոսկրագույն (պատերը վարդագույն), իսկ մյուսը՝ ապակու շաղախից, նուրբ ոսպնյակաձև (աղ. II, 1)։

Կարասային թաղում № 4. 1947 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի աջակողմյան պատին կից հայտնաբերվել է համեմատաբար լայն նստուկով, հաստիրան, թերի՝ վզի և պսակի մասը ամբողջապես կտրված մի կարաս (պահպանված բարձրությունը՝ 92 սմ, իսկ ամենալայն մասի տրամագիծը՝ 50 սմ)։ Կարասը տեղադրված է եղել հորիզոնական դիրքով։ Հողով լցված կարասի մեջ գտնվել է լավ պահպանված, կծկված կմախք՝ գանգը նստուկի մոտ, երեսը ուղղված հյուսիս-արևմուտք։ Կմախքի հետ հայտնաբերվել են բրոնզե, ակոսաղարդված կույգ ականջօղ, օղակաձև մատանի, որի ծայրերը միմյանց չեն զոդված և շքասեղ՝ թերի, կտրված, առանց վերնամասի. վերջին իրը չի պահպանվել (աղ. II, 4)։ Բրոնզից, երբեմն էլ ցածրորակ արծաթից նմանատիպ պարզ զարդեր մեծ թվով հայտնաբերվել են ոչ միայն Գառնիի, Օշականի, այլև Վրաստանի (Պարցխանականևի, Դափնարի), Ադրբեջանի (Մինգեչաուր) կարասային թաղումներում[13]։

Կարասային թաղում № 5. 1948 թ. կաթողիկե եկեղեցու հին արսիդի շրջակայքից հայտնաբերվել է թերի՝ առանց վերնամասի, կտրված փոքրիկ կարմիր կարաս, որի մեջ եղած դեղնավուն փխրուն հողը պարունակել է մանկան կմախք (փտած ոսկորներ)։

Կարասային թաղում № 6. 1949 թ. կաթողիկե եկեղեցու հարավային հիմքի արևելյան ծայրամասից հարավ գտնվել է հորիզոնական դիրքով տեղադրված, պսակի մասը հյուսիս

---

[8] Е. М. Алексеева, Античные бусы Северного Причерноморья, М., 1978, աղ. 20_{19}։

[9] Ж. Д. Хачатрян, Гарни V, Античный некрополь (результаты раскопок 1956—1972 гг.), Ереван, 1976, էջ 107, նկ. 46_1։

[10] Նույն տեղում, էջ 110։

[11] Ю. М. Гагошидзе, К датировке могильника Нерон Дереси («Мацне», серия истории, археологии, этнографии и истории искусства, Тбилиси, 1975, № 2, էջ 102, նկ. 11)։

[12] С. М. Казнев, Альбом кувшинных погребений, Баку, 1960, աղ. XXXVII։

[13] Ж. Д. Хачатрян, Гарни V, էջ 103, նկ. 45_2, 46_3; С. Есаян, А. Калаитарян, Античный некрополь Ошакана (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 12, էջ 36—37, աղ. III—IV։ М. М. Иващенко, Кувшинный могильник в Западной Грузии («Советская археология», 1950, XIII, էջ 326, նկ. 8); Н. Кигурадзе, Дапнарский могильник, Тбилиси, 1976, աղ. XLVII; С. М. Казиев, նշվ. աշխ., աղ. XXXIX։

ուղղված, խիստ ջարդոտված մի կարաս, որի վերին մասը բոլորված է եղել 2 սմ լայնությամբ, ժապավենաձև, միմյանցից 20 սմ հեռավորությամբ, առանց նախշի երկու գոտիներով։ Կարասի կողի հաստությունը 1,5 սմ է։ Շրջակայքում անկանոն թափված են եղել քարեր։ Կարասի մեջ գտնվող ամուր կավահողը պարունակել է մարդու ատամ և մի քանի ոսկոր։

Կարասային թաղում № 7. հայտնաբերվել է 1950 թ. միանավ բազիլիկ տաճարի արևելյան մասում, հորիզոնական դիրքով՝ բերանը արևմուտք ուղղված (աղ. III, 1)։ Կարասը եղել է ամբողջական, սակայն խիստ ճաքճքված, պակասել են միայն պսակի և ուսամասի մի քանի բեկորներ։ Պահպանված լուսանկարից երևում է, որ կարասն ունեցել է դանդվածեղ շուրթ՝ դուրս ցցված պսակով։ Թաղման անոթը, լցված հողախառն քարերով և հենց իր ջարդոտված բեկորներով, պարունակել է ամբողջական կմախքի փտած ոսկորներ, ուղեկցող հարուստ նյութերով։ Դրանք են՝ երկու քարե կնիք, քարե և ապակե բազմագան ու բազմաձև ուլունքներ, արծաթե ականջօղ՝ ագաթե կախիկով, արծաթե օղի բեկորներ (հավանաբար ականջօղի մնացորդներ են), բրոնզե շրջասեղ գլխիկի մասը կոտրված և պղնձե գմբեթաձև կոճակ, որը չի պահպանվել[14]։

Կարասային թաղում № 8. հայտնաբերվել է նույն՝ 1950 թ., նախորդի կողքին։ Կարասը տեղադրված է եղել հորիզոնական դիրքով՝ արևելքից արևմուտք, պսակը արևմուտք ուղղված։ Կարասի բերանը ծածկված է եղել քարե սալով։ Թաղման անոթի մեջ գտնվել է ձախ կողքին պառկեցված, կծկված մի կմախք, գանգը կարասի բերանի մոտ, այսինքն ուղղված արևմուտք (աղ. III, 3)։ Կմախքի վզի և ձեռքերի մոտից հայտնաբերվել են մետաղե, քարե, ապակե ուլունքներ և սարդիոնե կախիկներ (վերջիններս չեն պահպանվել), արծաթե ականջօղեր՝ ագաթե կախիկներով և բրոնզե, թերի (առանց գլխամասի) շրջասեղ[15]։

Անդրադառնանք վերը նկարագրված վերջին երկու կարասային թաղումներում հայտնաբերված նյութերին։

Հայտնաբերվել են երկու բրոնզե շրջասեղ, մեկը՝ մեխանման գլխիկով, կարճ, հասարակ, իսկ մյուսը (թնկնտ գլխիկը չի պահպանվել) պատրաստված է ավելի վարպետորեն՝ վերին մասում գնդաձև, երկու կողմից եզերված ուռուցիկ նեղ գոտիներով։ Շրջասեղները խիստ տարածված են եղել անտիկ աշխարհում։ Բայց տվյալ դեպքում ուշագրավն այն է, որ Դանիում, Մինգեչաուրում և այլուր հանդիպող կարասային թաղումներում շրջասեղները հանգուցյալին ուղեկցող իրերի անբաժան նմուշներից են[16]։



Աղ. III

Բազմաքանակ և բազմաձև են ուլունքները, որոնք պատրաստված են կիսաթանկարժեք քարերից (սարդիոն, խալկեդոն, հասպիս, գիշերգագատ), մետաղից (բրոնզ), ապակուց, այլ նյութերից (կրաքար, խեցի, ոսկր) և տարբեր նյութերի զուգակցումից (ապակի՝ ներսից ոս-

14 Կ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., նկ. 57։

15 Նույն տեղում, նկ. 58։

16 Ж. Д. Хачатрян, Гарни V, էջ 97։ С. М. Казиев. Альбом, աղ. XXXIX_2։ Т. И. Голубкина, Археологическое обследование и раскопки кувшинных погребений в Азербайджане в 1953 г. («Известия» АН АзССР, 1959, № 1, աղ. II_6)։

կեղծված)։ Ուլունքների մեծագույն մասը հիմնականում ունի պարզ երկրաչափական ձևեր՝ գնդաձև, գլանաձև, տակառաձև, շրջանաձև, սկավառակաձև, ոսպնյակաձև, երկկոնաձև, քառանկյունի, կան նաև բարդ՝ կաթիլաձև, սլաքաձև, սրբարդեզի նման և այլ ձևերի։

Հայտնաբերվել են ընդամենը 39 սարդիոնե ուլունք՝ գնդաձև (մանր ու խոշոր), գնդաձև՝ երկու կողմից սեղմված, գլանաձև, քառանկյունի բաժանարար՝ երկայնքով բացված երեք նուրբ անցքով, եռաշար մանր ուլունքաշարերի համար։ Սրանք կիսաթափանց և թափանցիկ են, բազմագույն՝ բաց վարդագույն, կարմրավուն, կարմրաշագանակագույն, մուգ բալագույն (հատկապես խոշորները)։ Սարիդոնե ուլունքներ մեծ թվով հայտնաբերվել են նաև Գառնիի կարասային թաղումներում։ Խալկեդոնից պատրաստված են սրբարզեղաձև և տակառաձև 5 ուլունք՝ բաց և մուգ մոխրագույն, երկնագույն երակներով օժտված։ Աչքի է դարձնում վարպետորեն հղկված միակ հասպիսե գնդաձև ուլունքը՝ մուգ կարմիր գույնի, վրան՝ մանր, սև խալեր և թելանման մոխրագույն երակներ։ Հավանաբար, հիշյալ քարե ուլունքները պատրաստվել են տեղում, տեղական հումքից, քանի որ մերձերևանյան խայտարդետ շերտախումբը, որը ձգվում է Ջրվեժ գյուղից մինչև Վեգի, պարունակում է և՛ խալկեդոն, և՛ հասպիս, գուցե և սարդիոն[18]։ Պահպանվել է նաև գիշերե տակառաձև մեկ ուլունք։ Հավաքածուի մեջ կան նաև բրոնզե պարզ շրջանաձև երկու ուլունք։

Մի առանձին մեծ խումբ են ապակուց և ապակու շաղախից պատրաստված ուլունքները, որոնք թե՛ իրենց ձևերով (գնդաձև, գլանաձև, սկավառակաձև, ոսպնյակաձև, երկկոնաձև, սլաքաձև) և թե՛ գույներով (դեղնավուն, երկնագույն, փիրուզագույն, կապույտ, սև) զարմանալիորեն հարում են ոչ միայն Հայաստանի (Գառնի, Օշական), Ադրբեջանի, Վրաստանի կարասային թաղումներից, այլ նաև հյուսիսմերձսևծովյան բնակավայրերից (և թաղումներից) ձեռք բերված հելլենիստական դարաշրջանի ուլունքներին[19]։ Նույն դարաշրջանի հուշարձաններին սերտորեն աղերսվում են նաև բազմագույն ապակուց պատրաստված և զարդանախշված ուլունքները։ Երկուսը տակառաձև են՝ երկարավուն, սրանց համարյա սև (մուգ մոխրագույն) միջուկի մի կեսով անցնում է բազմաշերտ նախշ, կազմված բազմագույն (սպիտակ, դեղնավուն, երկնագույն և նույնքան շագանակագույն), տարբեր խտությամբ դասավորված մանր թելերից, որոնք ներթափանցելով և ձուլվելով միջուկին, ստեղծել են գեղեցիկ, խիստ բնական գունային ներդաշնակություն։

Բազմագույն ուլունքների թվին են պատկանում ակնուլունքները։ Դվինում հայտնաբերվածները տարպտեսակ են։ Ամենապարզ ձևով զարդանախշված է սպիտակ պուտերով գնդաձև ակնուլունքը։ Նման պտավոր ուլունք ստանալու համար տաքացնում և փափկեցնում էին արդեն ձևավորված միջուկը և ընդելուզում այն ցանկացած գույնի ապակու կաթիլներով։ Սակայն այս խմբում կան նաև գնդաձև ակնուլունքներ, ընդելուզված կապույտ գույնի բարդ բաղկացուցիչ աչքերով։ Այս օղակավոր, կապույտ բիրով աչքերն առանձին պատրաստել են սպիտակ սկավառակի վրա և հետո միայն մտցրել տաքացված, իսայց արդեն ձևավորված միջուկի մեջ, որից հաճախ միջուկը կորցնում էր իր նախկին տեսքը։

Ոսկեգույն փայլով գրավիչ են գնդաձև, երկու կողմից սեղմված և երկկոնաձև ուրվագծով շատ նուրբ ուլունքները։ Մետաղե ներդիրով ապակին անտիկ աշխարհին քաջ ծանոթ է և լայնորեն կիրառվել է ապակեգործության մեջ ընդհանրապես[20]։ Ոսկեզօծ ուլունքները, երևան գալով վաղհայկական ժամանակաշրջանում, հարատևել են նաև հռոմեական տիրապետության ընթացքում[21]։ Սակայն ուսումնասիրողները երկկոնիկ, ոսկեզօծ, նուրբ ուլունքները համարում են զուտ հելլենիստական դարաշրջանի արդյունք։ Ուշագրավ է, որ նույնը

---

[17] Ж. Д. Хачатрян, Гарни V, էջ 106։

[18] Այս տեղեկության համար շնորհակալություն եմ հայտնում երկրաբանական գիտությունների թեկնածու Կ. Ի. Կարապետյանին։

[19] Ж. Д. Хачатрян, Гарни, V, էջ 109—112։ С. Есаян, А. Калантарян, Античный некрополь Ошакана, էջ 37։ С. М. Казиев, Альбом, աղ. XLI—XLIII։ Б. А. Куфтин, Материалы к археологии Колхиды, т. II, Тбилиси, 1950, էջ 51—52։ М. М. Иващенко, Кувшинный могильник в Западной Грузии, էջ 326—327։ Н. Кигурадзе, Дапнарский могильник, էջ 55։ Е. М. Алексеева, Античные бусы Северного Причерноморья, М., 1975, աղ. 12, 15։ Նույնի՝ Античные бусы Северного Причерноморья, М., 1978, աղ. 27, 30, 33։

[20] Н. Качалов, Стекло, М., 1959, էջ 88։

[21] А. О. Мнацаканян, Г. А. Тираян, Новые данные о материальной культуре древней Армении (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1961, № 8, էջ 74)։

դիտվում է նաև հյուսիսմերձսևծովյան նմանատիպ ուլունքների հավաքածուներում[22]։

Հանդիպում ենք նաև այլ նյութերից պատրաստված ուլունքների մեկ կամ երկու նմուշների։ Օրինակ՝ կրաքարե երկարավուն տակառաձև և քառանկյունի բաժանարարի, ոսկրե գլանաձև ուլունքների և այլնի։

Այս ամբողջ հավաքածուի մեջ կան երեք կաուրի խեցիներ։ Սրանց հանդիպում ենք ամենուրեք՝ հաճախ հենց կարասային թաղումներին ուղեկցող իրերի շարքում։ Խեցիները բերված են հավանաբար Միջերկրական ծովի կամ Հնդկական օվկիանոսի ափերից։ Ակնուլունքներին, հաճախ նաև քարե ուլունքներին, վերագրել են հմայական զորություն, և կիրառել որպես հուռութք՝ «չար աչքից» պահպանվելու համար, իսկ տվյալ դեպքում գուցե և ընկալվել է հոգու պահպանության միջոց։

Այս համալիրի իրերի մեջ կարևոր տեղ են գրավում ցածրորակ արծաթից պատրաստված, ագաթե նուրբ կախիկներով շրջանաձև ականջօղերը։ Ագաթե կախիկները քննվող ժամանակաշրջանին բնորոշ կաթիլանման ուլունքներ են, որոնք իրենց վերին մասում ունեն թելի անցքեր։ Դվինի ականջօղերը հար և նման են Գառնիի և Արտաշատի կարասային թաղումներում հայտնաբերվածներին. վերջիններս, սակայն, ունեն ավելի փոքր տրամագիծ ու հանդիսանում են բրոնզե օղակի և ապակու շաղախից պատրաստված կաթիլանման ուլունքի զուգակցում։ Գառնիի և Արտաշատի այս ականջօղերը գտնվել են ապակե բազմանիստ կնիքների հետ և թվագրվում են մ. թ. ա. II—I դդ.[23]։ Դվինի ականջօղերը ևս կարելի է թվագրել մ. թ. ա. II—I դդ., որը հաստատվում է այդ կարասում հայտնաբերված մ. թ. ա. II—I դդ. քարե, սրբաբզեղաձև կնիքով։

Հանգուցյալի անձնական իրերի հետ № 7 կարասում գտնվել է նաև քարե երկու կնիք։ Մեկը կանաչավուն քարից պատրաստված բազմանիստ է (1,5×1,8 սմ), որը երկայնքով ունի թելի անցք, քանի որ կնիքները օգտագործվել են ոչ միայն իբրև այդպիսիք, այլև՝ որպես զարդ կամ հուռութք, «չար աչքից» պահպանելու համար։ Բազմանիստ կնիքի վրա պատկերված է մենամարտ հեծյալի և հետիոտնի միջև։ Հեծյալին աջակցում է ձիու կողքին պատկերված հարձակվող շունը։ Դվինի քարե բազմանիստ կնիքը ուսումնասիրողները վերագրում են, այսպես կոչված, «հունա-պարսկական» քարերի խմբին և թվագրում մ. թ. ա. V դարի երկրորդ կեսով[24]։ Գառնիի կարասային թաղումից հայտնաբերվել է մ. թ. ա. II—I դդ. ապակե բազմանիստ կնիք, որը վրա նույնպես պատկերված է հեծյալի և հետիոտնի մենամարտը[25]։ Վերջինս պատկերման ձևով, մանրամասներով և գեղարվեստական ոճով շատ նման է Դվինի քարե բազմանիստ կնիքին։ Դիտողությունները ցույց են տալիս, որ սրանց և նույնաոճ կնիքների՝ մ. թ. ա. V—I դդ. ընդգրկող ժամանակագրական շրջանակները պետք է ավելի սեղմել։ Ուստի կարելի է Դվինի բազմանիստը վերաթվագրել ավելի ուշ ժամանակով, որը հաստատում են նույն կարասում գտնված մնացած նյութերը ևս, այն է՝ II—I դդ.։

Մյուս կնիքը սրբաբզեղաձև է, սարդիոնից պատրաստված և նույնպես անցքով։ Կնիքի ներքին հարթ մակերեսի վրա պատկերված է երկարավուն վահաններով և նիզակներով զինված երկու հետիոտնի մենամարտ։ Թեև պատկերը խիստ պարզունակ է, սխեմատիկ, սակայն արմատապես տարբերվում է Հայաստանում հայտնաբերված մ. թ. ա. VI—V դդ. սրբաբզեղաձև կնիքների հնաոճ պատկերներից և իր սյուժեով, պատկերման ոճով ու մանրամասներով բացահայտորեն հարում է մ. թ. ա. II—I դդ. կնիքներին[26]։

Այսպիսով, քննված նյութը թույլ է տալիս № 7 և № 8 կարասային թաղումները համարել համաժամանակյա և թվագրել մ. թ. ա. II—I դդ.։

Կարասային թաղում № 9. հայտնաբերվել է 1951 թ. կաթողիկե եկեղեցու հիմքերի մոտ, հարավային աբսիդի մեջ։ Եկեղեցու հիմքերը դնելիս կարասն ամբողջովին փշրվել է, որի հետևանքով մեջը գտնված կմախքը փտել է։ Կմախքի հետ գտնվել են ապակե տարատեսակ ուլունքներ, բրոնզե օղի բեկորներ և կոնաձև կոճակ. վերջին երկուսը չեն պահպանվել (աղ. II, 2)։ Գտնված ուլունքաշարում կրկնվում են արդեն հիշատակված ապակու շաղախից պատրաստված ուլունքները՝ գնդաձև, գլանաձև, երկկոնիկ, ոսպնյակաձև և այլ ձևի։ Բազմագույն ապակուց են պատրաստված կապույտ պուտերով և բարդ բաղկացուցիչ աչքերով ընդելուզ-

---

22 Е. М. Алексеева, Античные бусы..., М., 1978, էջ 27—32, աղ. 26։

23 Ж. Д. Хачатрян, Гарни V, էջ 94, նկ. 35_3, էջ 102։

24 Ժ. Դ. Խաչատրյան, Հայաստանում հայտնաբերված բազմանիստ կնիքները (Պատմա-բանասիրական հանդես, 1965, № 1, էջ 271—277)։

25 Ж. Д. Хачатрян, Гарни V, էջ 128, նկ. 35_1։

26 Բ. Ն. Առաքելյան, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության (մ. թ. ա. VI դար—մ. թ. III դար), Երևան, 1976, էջ 33։

ված երկու ուլունք, ինչպես նաև տակառաձև, սև փայլուն մակերեսով, միջուկի կենտրոնով լայնակի անցնող միաշերտ, համարյա սպիտակ (դեղնավուն), պարզ ժապավենաձև նախշով երկու այլ ուլունք։ Վերջիններս աղերսվում են նույնպես բազմագույն ապակուց պատրաստված նման ձևի և գույնի հյուսիսմերձսևծովյան ուլունքներին[27]։

Կարասային թաղում № 10. 1951 թ. կաթողիկե եկեղեցու հարավարևելյան անկյունում, դրսից հայտնաբերվել են մեծ կարաս և վերջինիս կպած երկու փոքրիկ կճուճ (աղ. III, 2)։ Դժբախտաբար, սրանցից ոչ մեկը մեզ չի հասել։ Միայն պահպանված լուսանկարից երևվում է, որ կարասն ունեցել է հարթ նստուկից աստիճանաբար լայնացող հաստափոր իրան և դուրս փռված պսակ, որը դրսից եղերված է փորագիր ատամնաձև նախշազարդով։ Կճուճներից մեկը ունեցել է շեփորաձև լայն բերան և չափազանց ուռուցիկ իրան։ Կարասի մեջ գտնվել են միայն մարդկային ոսկորներ։

Կարասային թաղում № 11. սա հայտնաբերվել է 1976 թ. կենտրոնական թաղամասի V գարի պալատական շինությունից արևելք ընկած հատվածում, պեղումների ժամանակ։ Տափակ, հարթ նստուկով կարասը տեղադրված էր ուղղահայաց դիրքով, սակայն թերի՝ առանց վերնամասի։ Կարասը լցված էր հողով և պարունակում էր մարդկային կմախքի մի քանի ոսկոր։

Անցած տարիների կարասային թաղումներից ձեռք բերված նյութերն, այսպիսով, ուշագրավ տվյալներ են տալիս։ Թեև դրանք հարուստ չեն, սակայն հատկանշականն այն է, որ ձևով, մանրամասներով, մշակումով և, վերջապես, ողջ նշանակությամբ խիստ բնորոշ են հելլենիստական դարաշրջանի այս ձևի թաղումներին ընդհանրապես։

Չնայած նկարագրված թաղումներից ամբողջական կարաս մեզ չի հասել, սակայն պահպանված լուսանկարները և 1978 թ. պեղումների արդյունքները հնարավորություն են ընձեռում ներկայացնել Դվինի թաղման կարասների հիմնական ձևը։ Այդ անոթներն ունեցել են տափակ, փոքր նստուկ, որից աստիճանաբար ձգվող հաստապատ կողերը (հատկապես ուսերի շրջանում) կազմել են խիստ ուռուցիկ իրան և հաստաշուրթ, դուրս փռված, ցցված պսակով կարճ վիզ։ Զևով բավական վարպետորեն պատրաստված այս կարասները ընդհանուր առմամբ կոպիտ են, չկա արտաքին որևէ մշակում, որևէ զարդ, բացառությամբ երկու կարասների, որոնցից մեկի շուրթը պատած է փորագիր ատամնաձև նախշազարդով, իսկ մյուսի իրանի ուսամասը բոլորված է երկու նեղ ուռուցիկ գոտիներով։ Եթե դատենք 1978 թ. պեղված կարասի անմշակ, հողագույն արտաքինից և պատերի ներսում պահպանված հետքերից, ապա կհամոզվենք, որ Դվինի թաղման կարասները լայնորեն կիրառվել են կենցաղում։ Հաստափոր իրան, բայց փոքր նստուկ ունենալու պատճառով այդ կարասներն օգտագործելիս, հավանաբար, նպատակահարմար են գտել դրանք կիսով չափ գետնի մեջ թաղել։ Այդ յուրահատուկ կիրառման պատճառով էլ, ըստ երևույթին, հիշյալ անոթների արտաքին մշակման և նախշազարդման անհրաժեշտություն չի եղել։ Մինչդեռ Դվինից հայտնաբերվել են միջին տարողությամբ հելլենիստական կարասներ՝ շքեղ գունազարդումով[28]։ Պարզվում է, որ թաղման կարասներն ունեցել են 120 սմ-ից ավելի բարձրություն, փորի տրամագիծը՝ 90 սմ, իսկ կողի հաստությունը հասել է 1,5—2 սմ։ Նկարագրված ձևը Արմավիրի հելլենիստական ժամանակաշրջանի կարասների ամենատարածված ձևերից մեկն է համարվում[29]։ Նման բազմաթիվ կարասներ կան Մոխրարլրի մ. թ. ա. III—I դդ. խեցեղենի մեջ։ Եվ, վերջապես, համանման կարասներ օգտագործվել են Օշականի և հատկապես Գառնիի մ. թ. ա. II—I դդ. թաղումներում[30]։ Մինչդեռ Արտաշատի, Գառնիի, Վաղարշապատի, Նախիջևանի արդեն մ. թ. I—III դդ. թաղման կարասները թե՛ տիպաբանորեն՝ իրենց սուր, կրունկանման նստուկով և ձգված իրանով և թե՛ մշակումով ակնհայտորեն առանձնանում են վերը հիշատակվածներից, կազմելով տվյալ դարաշրջանին բնորոշ մի յուրատեսակ խումբ[31]։

---

27 Е. М. Алексеева, Античные бусы..., М., 1978, էջ 40։

28 Գ. Քոչարյան, «Դվինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը», էջ 87։

29 Г. А. Тирацян, Древнеармянская керамика из раскопок Армавира («Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 1, էջ 217—218), Գ. Ա. Տիրացյան, Արմավիրի պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1974, № 12, նկ. 3ա)։

30 С. Есаян, А. Калантарян, նշվ. աշխ., էջ 30։ Ж. Д. Хачатрян, Гарни V, աղ. IV։

31 Б. Н. Аракелян, Гарни II, Ереван, 1957, էջ 23, նկ. 5։ Т. И. Голубкина, Раскопки кувшинных погребений в с. Коша-Диза Нахичеванской АССР, ДАН АзССР, т. XIII, № 9, 1957, էջ 1037։ Ա. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, նկ. 13գ։ Ժ. Դ. Խա-

Այսպիսով, Դվինի կարասների վերոհիշյալ խումբը կազմում է մի շատ որոշակի տիպ, որը սերտորեն աղերսվում է Հայաստանի հենց հելլենիստական դարաշրջանի նմանատիպ կարասներին, որոնք օգտագործվել են տնտեսության մեջ կենցաղային տարբեր նպատակներով, ինչպես նաև մ. թ. ա. III—I դդ.՝ որպես թաղման անոթներ։

Տեսնում ենք, ուրեմն, որ Դվինի առանձին կարասային թաղումներից ձեռք բերված նյութերը միմյանցից չեն տարբերվում, հանգամանք, որ հնարավորություն է տալիս ոչ միայն հնագիտական ամբողջ նյութի միասնական վերլուծության, այլև անվերապահորեն հաստատում է, որ Դվինի դամբարանադաշտը պատկանում է որոշակի մի դարաշրջանի։

Վերը քննած նյութի թվագրումները թույլ են տալիս այս հուշարձանը համարել մ. թ. ա. II—I դդ.։ Բացի այդ, առաջարկված թվագրումը հաստատում է Դվինի միջնարևդում հելլենիստական բնակավայրի գոյությունը վկայող հնագիտական շերտն իր նյութերով (գունապարդ խեցեղենով, քարե բազմանիստ կնիքներով, սյան քարե խարիսխներով, որոնք վկայում են անտիկ դարաշրջանի շինարարական արվեստով կերտած կառույցների գոյության մասին)։ Պրոֆ Կ. Դ. Ղաֆադարյանը դեռևս 1950-ական թթ. իրավացիորեն ենթադրում էր, որ «քաղաքի այդ թաղը հավանաբար քրիստոնեությունից առաջ, եղել է դամբարանադաշտ բերդի բնակիչների համար»32։

Այսպիսով, բնակավայրի և այժմ արդեն դամբարանադաշտի ուսումնասիրությունները հաստատում են հելլենիստական դարաշրջանի մի ամբողջական հուշարձան-համալիրի գոյությունը Դվինում։

Գ. Գ. ՔՈՉԱՐՅԱՆ

ПОДПОЛКОВНИК РУССКОЙ ВОЕННОЙ СЛУЖБЫ Н. И. ГАДЖАНОВ (АГАДЖАНЯН)

В анналы военной истории России вписаны имена генералов и офицеров русской армии Лазаря Христофорова, Авана Юзбаши, Степана Сумбатова, Ростома Мадатова, Дмитрия Ашхарумова, Лазаревых, Аргутинских, Деляновых, Меликовых, Абамеликовых, Каспаровых, Бебутовых, Лалаевых, Шахназазянов и многих других сынов Армении. К их числу принадлежит и подполковник Никита Иванович Гаджанов (Агаджанян). Он долгие годы служил в русской армии и в составе ее черноморского казачьего войска совершил много славных подвигов*.

Нам пока не удалось найти достоверных данных о месте и годе рождения Никиты Ивановича, о его детстве, юношеских годах, образовании, семейном положении. В его рапорте на имя начальства говорится, что он—далекий потомок знатного рода Оменов, жившего в Киликийском армянском государстве, и что некоторые представители этого рода после падения Киликии переселились в Восточную Армению, где со времени правления Персией шаха Надира занимали видное положение и играли важную роль в политической жизни страны. Отец Гаджанова Ованес родился и вырос в Конде—одном из районов Еревана, а затем вместе с семьей вынужден был покинуть родину.

Судя по тому, что Никита Иванович, кроме родного армянского языка, владел русским, грузинским, персидским и турецким языками, можно предположать, что вначале он жил в Закавказье, а впоследствии в России, где провел бо́льшую часть своей жизни. Далее: обширные знания по истории стран Передней Азии, в особенности истории и культуры Армении, тонкая наблюдательность, умение выделять из сложной цепи противоречивых событий наиболее существенные факты и на их основе

---

23 «Դվին քաղաքը և նրա պեղումները», էջ 59։

Հատրյան, Ռ. Մ. Թորոսյան, Նյութեր Վաղարշապատի հյուսիս-արևելյան դամբարանադաշտից (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր» (հաս. գիտ.), 1976, № 5, էջ 99—111)։

* Фактическую основу данного сообщения составляет рапорт Н. И. Гаджанова от 10 августа 1804 г. о путешествии по Армении, хранящийся в «Деле Кубанского войскового архива по общей атаманской описи 1804 г., № 483» и опубликованный в «Записках одесского императорского общества истории и древностей», т. XXI, 1898, стр. 28—45.